Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը

1148-Արտաուսումնական դաստիարակության ծրագիր

Վերջնական արդյունքի նկարագրությունը

Հանրակրթական ուսուցման համակարգում ընդգրկված երեխաների ֆիզիկական, հոգևոր և գեղագիտական զարգացում, բնապահպանական և կիրառական գիտելիքների ձեռքբերում

Ծրագրային դասիչը 1157 ԾS01	*Անվանումը՝* Աջակցություն Երևանի քաղաքապետին տեղական ինքնակառավարման լիրազորությունների իրականացման նպատակով *Նկարագրություն* Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման լիրազորությունների իրականացման նպատակով պետական բյուջեից ֆինանսական աջակցության տրամադրում								
Շահառուների քանակը	համայնքների թիվը				1	0.0	0.0	0.0	0.0
Գումարը (հազար դրամ)		X	X	X	X	0.0	0.0	0.0	1,056,280.7
Տրանսֆերտի վճարման հաճախականությունը						0.0	0.0	0.0	0.0

Շահառուների ընտրության չափանիշները

Չափորոշիչներ		Ոչ ֆինանսական ցուցանիշներ				Ֆինանսական ցուցանիշներ			
		Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի	Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
,Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասինե ՀՀ օրենք									
Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը									
1157 Քաղաքային զարգացման ծառայություններ									
Վերջնական արդյունքի նկարագրությունը									
Նպաստում է Երևանի քաղաքապետարանի և համապետական ծրագրերով սահմանված նպատակների իրականացմանը									
Ծրագրային դասիչը 1157 ԾS02	*Անվանումը՝* Երևան քաղաքի փողոցների արտաքին լուսավորության ծառայություններ *Նկարագրություն* Աջակցություն Երևանի քաղաքապետարանին Երևան քաղաքի փողոցների արտաքին լուսավորության ապահովման նպատակով								
Շահառուների քանակը	Համայնքերի քանակը				1	0.0	0.0	0.0	0.0
Գումարը (հազար դրամ)		X	X	X	X	0.0	0.0	0.0	2,121,973.0
Տրանսֆերտի վճարման հաճախականությունը					ամսեկան	0.0	0.0	0.0	0.0
Շահառուների ընտրության չափանիշները									
Երևան համայնք									
Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը									
1157-Քաղաքային զարգացման ծառայություններ									
Վերջնական արդյունքի նկարագրությունը									
Երևան քաղաքի ենթակառուցվածքների բարելավում									
Ծրագրային դասիչը 1157 ԾS03	*Անվանումը՝* Աջակցություն Երևան քաղաքի ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրին (Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ)								

Չափորոշիչներ		Ոչ ֆինանսական ցուցանիշներ				Ֆինանսական ցուցանիշներ			
		Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի	Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
	Նկարագրություն Աջակցության տրամադրում Երևան քաղաքի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի բարելավման նպատակով								
Շահառուների քանակը	Համայնքների քանակը					0.0	0.0	0.0	0.0
Գումարը (հազար դրամ)		X	X	X	X	0.0	0.0	0.0	712,672.5
Տրանսֆերտի վճարման հաճախականությունը						0.0	0.0	0.0	0.0

Շահառուների ընտրության չափանիշները

Համայնք

Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը

1157 Քաղաքային զարգացման ծառայություններ

Վերջնական արդյունքի նկարագրությունը

Ծրագրերի իրականացման արդյունքում ապահովել Երևան քաղաքի ջրամատակարարում և ջրահեռացում

Ծրագրային դասիչը 1157 ԾS04	*Անվանումը՝* Աջակցություն Երևան քաղաքի ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրին (Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ) *Նկարագրություն* Աջակցության տրամադրում Երևան քաղաքի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի բարելավման նպատակով								
Շահառուների քանակը	Համայնքների քանակը					0.0	0.0	0.0	0.0
Գումարը (հազար դրամ)		X	X	X	X	0.0	0.0	0.0	154,222.5
Տրանսֆերտի վճարման հաճախականությունը						0.0	0.0	0.0	0.0

Շահառուների ընտրության չափանիշները

Համայնք

Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը

Չափորոշիչներ		Ոչ ֆինանսական ցուցանիշներ				Ֆինանսական ցուցանիշներ			
		Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի	Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
1157 Քաղաքային զարգացման ծառայություններ									
Վերջնական արդյունքի նկարագրությունը Ծրագրերի իրականացման արդյունքում ապահովել Երևան քաղաքի ջրամատակարարում և ջրահեռացում									
Ծրագրային դասիչը 1157 ԾS05	*Անվանումը՝* Աջակցություն Երևան քաղաքի ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրին (Ֆրանսիայի հանրապետության կառավարության աջակցությամբ) *Նկարագրություն* Աջակցության տրամադրում Երևան քաղաքի ջրամատակարարաման և ջրահեռացման համակարգի բարելավման նպատակով								
Շահառուների քանակը	Համայնքների քանակը					0.0	0.0	0.0	0.0
Գումարը (հազար դրամ)		X	X	X	X	0.0	0.0	0.0	1,911,095.7
Տրանսֆերտի վճարման հաճախականությունը						0.0	0.0	0.0	0.0
Շահառուների ընտրության չափանիշները Համայնք									
Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը 1157 Քաղաքային զարգացման ծառայություններ									
Վերջնական արդյունքի նկարագրությունը Ծրագրերի իրականացման արդյունքում ապահովել Երևան քաղաքի ջրամատակարարում և ջրահեռացում									
Ծրագրային դասիչը 1157 ԾS06	*Անվանումը՝* Աջակցություն Երևան քաղաքի ջրամատակարարման և ջրահեռացման դրամաշնորհային ծրագրին (Եվրոպական միության հարևանության ներդրումային բանկի աջակցությամբ)								

Չափորոշիչներ		Ոչ ֆինանսական ցուցանիշներ				Ֆինանսական ցուցանիշներ			
		Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի	Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
	Նկարագրություն Աջակցության տրամադրում Երևան քաղաքի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի բարելավման նպատակով								
Շահառուների քանակը	Համայնքների քանակը					0.0	0.0	0.0	0.0
Գումարը (հազար դրամ)		X	X	X	X	0.0	0.0	0.0	154,222.5
Տրանսֆերտի վճարման հաճախականությունը						0.0	0.0	0.0	0.0
Շահառուների ընտրության չափանիշները Համայնք									
Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը 1157 Քաղաքային զարգացման ծառայություններ									
Վերջնական արդյունքի նկարագրությունը Ծրագրերի իրականացման արդյունքում ապահովել Երևան քաղաքի ջրամատակարարում և ջրահեռացում									
Ծրագրային դասիչը 1157 ԾS07	*Անվանումը՝* Աջակցություն Երևան քաղաքի ջրամատակարարման և ջրահեռացման դրամաշնորհային ծրագրին (Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ) *Նկարագրություն* Աջակցության տրամադրում Երևան քաղաքի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի բարելավման նպատակով								
Շահառուների քանակը	Համայնքների քանակը					0.0	0.0	0.0	0.0
Գումարը (հազար դրամ)		X	X	X	X	0.0	0.0	0.0	116,797.8
Տրանսֆերտի վճարման հաճախականությունը						0.0	0.0	0.0	0.0
Շահառուների ընտրության չափանիշները Համայնք									
Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը									

Չափորոշիչներ		Ոչ ֆինանսական ցուցանիշներ				Ֆինանսական ցուցանիշներ			
		Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի	Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
1157 Քաղաքային զարգացման ծառայություններ									
Վերջնական արդյունքի նկարագրությունը Ծրագրերի իրականացման արդյունքում ապահովել Երևան քաղաքի ջրամատակարարում և ջրահեռացում									
Ծրագրային դասիչը 1157 ԾS08	*Անվանումը՝* Պետական աջակցություն Երևան համայնքին 4-րդ աստիճանի վթարային շենքերի քանդման հետևանքով բնակտարածությունից զրկված բնակիչների փոխհատուցման համար բնակարանների ձեռքբերման նպատակով *Նկարագրություն* Երևան քաղաքում քանդման ենթակա վթարային շենքերի բնակիչների փոխհատուցման համար բնակարանների ձեռքբերման նպատակով օժանդակություն								
Շահառուների քանակը	Մշակված չէ					0.0	0.0	0.0	0.0
Գումարը (հազար դրամ)		X	X	X	X	0.0	0.0	0.0	2,000,000.0
Տրանսֆերտի վճարման հաճախականությունը						0.0	0.0	0.0	0.0
Շահառուների ընտրության չափանիշները Կիրառելի չէ									
Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը 1157 Քաղաքային զարգացման ծառայություններ									
Վերջնական արդյունքի նկարագրությունը Ակնկալվում է Երևան քաղաքում քանդման ենթակա վթարային շենքերի բնակիչների փոխհատուցման համար բնակարանների ձեռքբերում և տրամադրում:Ծրագիրը կնպաստի Երևան քաղաքում քանդման ենթակա 4-րդ աստիճանի վթարային շենքերի բնակիչների վերաբնակեցմանը:									

ՀՀ առողջապահության նախարարություն

ՄԱՍ Ա: ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. **ՀՀ առողջապահության նախարարության առաջնահերթ ռազմավարական նպատակներն են՝**

- բնակչության հիգիենիկ և համաճարակային անվտանգության ապահովումը,
-բնակչության առողջության առաջնային պահպանումը,
-մոր և մանկան առողջության պահպանումը,
-բնակչության սոցիալապես անապահով և առանձին /հատուկ/ խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնության տրամադրումը,
-սոցիալական, հատուկ նշանակություն ունեցող և առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելումն ու բուժօգնության կազմակերպումը,
- դեղագործական գործունեության կազմակերպումը, բնակչությանը անվտանգ, արդյունավետ և որակյալ դեղերով ապահովումը:

2. **ՀՀ առողջապահության նախարարության գերակա վերջնական արդյունքները**, **որոնց վրա գերատեսչությունը ձգտում է ներազդել և նրանց իրագործման ռազմավարություններն են**.

<u>Բնակչության հիգիենիկ և համաճարակային անվտանգության ապահովում</u>

Բնակչության հիգիենիկ և համաճարակային անվտանգության ապահովումը պետական կարևորագույն խնդիրներից է և երաշխավորվում է «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով: Այս համակարգի անխափան գործունեության ապահովումը կենսական նշանակություն ունի երկրի սոցիալ-տնտեսական զարգացման և բնակչության առողջության պահպանման բնագավառում:

2015 թվականին շարունակվելու է ոլորտի կառավարելիության, մատուցվող ծառայությունների որակի ու արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումները, գործընթացը կանոնակարգող օրենսդրական փաստաթղթերի մշակման ու գործադրման, վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի և կանխարգելման հաճարակաբանական հսկողության, ռիսկի կառավարման, արագ արձագանքման, լաբորատոր գործունեության զարգացման, ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգի ներդրման աշխատանքները:

Արդյունքում ակնկալվում է՝

-ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովում,
-մարդու օրգանիզմի վրա շրջակա միջավայրի վնասակար ու վտանգավոր գործոնների ազդեցության նվազեցում,
-մարդու և նրա ապագա սերունդների կենսունակության համար բարենպաստ պայմանների ապահովում:

Վարակիչ հիվանդությունների կանխարգելման բնագավառում՝

-կարմրուկի և կարմրախտի վերացում,
-«պոլիոմիելիտից ազատ» երկրի կարգավիճակի պահպանում,
-մալարիայի արմատավորման կրկին կանխարգելում,
-օջախային ախտահանման ենթակա վարակիչ հիվանդությունների օջախների ժամանակին ախտահանում - 99.7%

-նորածիններին տուբերկուլյոզի դեմ ԲՑԺ պատվաստանյութով պատվաստումներում ընդգրկում- 98%

-նորածիններին Հեպատիտ "Բ"-ով պատվաստումներում ընդգրկում - 97%

-մինչև 1 տարեկան երեխաներին հնգավալենտ (ԱԿԴՓ, ՎՀԲ, ՀԻԲ) պատվաստանյութով պատվաստումներում ընդգրկում - 95%:

Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման բնագավառում՝

-առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների (սիրտանոթային, չարորակ նորագոյացությունների, շաքարային դիաբետի և այլն) համաճարակաբանական հսկողության համակարգի ձևավորման ճանապարհով բնակչության առողջության պահպանման, ամրապնդման և կանխարգելման ապահովում:

<u>Բնակչության առողջության առաջնային պահպանում</u>

Որպես առաջնահերթություն, շարունակվելու է առողջության առաջնային պահպանման ոլորտի զարգացումը՝ որպես բնակչությանը ցուցաբերվող բժշկական օգնության առավել մատչելի հիմնական օղակի, որի հիմնական գործառույթը հիվանդությունների վաղ հայտնաբերումն ու կանխարգելումն է:

Պահպանելով բնակչության բոլոր խմբերի համար անվճար բժշկական օգնության և սպասարկման սկզբունքը, հիմնական շեշտը դրվելու է ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայության նյութատեխնիկական բազայի ամրապնդման, մասնագիտական ներուժի գիտելիքների ու հմտությունների բարելավման, բուժօգնության այդ մակարդակում որակի բարելավման ու վերահսկման (առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցողների կողմից որակյալ բուժօգնության տրամադրման խրախուսմամբ և ըստ կատարողականի փոխհատուցման մեխանիզմների ներդրմամբ), ինչպես նաև կանխարգելիչ ուղղվածության ուժեղացման վրա:

Արդյունքում ակնկալվում է՝

-ամբուլատոր-պոլիկլինիկական օղակում անվճար բուժօգնության և ծառայությունների իրականացման գործընթացի շարունակականության ապահովում, այն բնակչության համար առավել մատչելի դարձնելու նպատակով,

-առաջնային օղակում իրականացվող բուժօգնության և մատուցվող ծառայությունների որակի վերահսկում և բարելավում,

-առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների վաղ հայտնաբերման, ախտորոշման ու կանխարգելման ճանապարհով բնակչության առողջության հիմնական ցուցանիշների բարելավում: Այդ հիվանդությունների բարդությունների, հաշմանդամության և մահացության ցուցանիշների կրճատում,

-սոցիալական հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների կանխարգելման, բուժման և վերականգնողական միջոցառումների իրականացում ամբուլատոր- պոլիկլինիկական ու մասնագիտացված (արտահիվանդանոցային) բժշկական կազմակերպություններում,

-բնակչի կողմից առողջության առաջնային ծառայություններ մատուցող բժշկի ազատ ընտրության գործընթացի շարունակականության ապահովում և դրա հիման վրա ընտանեկան բժկշության անկախ պրակտիկաների ստեղծում՝ նպատակ ունենալով բարձրացնել բուժաշխատողների պատասխանատվությունը մատուցվող ծառայությունների մատչելիության և որակի ապահովման խնդիրներում և խրախուսել մրցակցային դաշտի ձևավորումն առաջնային օղակում:

Շտապ բուժօգնության ծառայության բարելավում

Շտապ բուժօգնության ծառայությունը հանդիսանում է առողջապահության համակարգի կարևորագույն կառույցը՝ ինչպես տարաբնույթ հիվանդությունների և վնասվածքների հետևանքով կյանքին վտանգ սպառնացող անհետաձգելի իրավիճակների, այնպես էլ արտակարգ իրավիճակների և աղետների ժամանակ, երբ հիվանդության ելքը հիմնականում կախված է շտապօգնության արագ տեղ հասնելուց, տեղում կամ ճանապարհին անհետաձգելի բուժօգնության կազմակերպումից, հիվանդին մասնագիտացված բուժհաստատություն ժամանակին տեղափոխելուց:

Ծառայության բարելավման խնդրում շեշտը դրվելու է մեքենաների պարկի շարունակական նորացման, անհրաժեշտ սարքերով ու դեղերով հագեցման, կանչերի գրանցման համակարգի արդիականացման, մասնագետների կրթման և մատուցվող ծառայությունների որակի վերահսկման վրա:

Արդյունքում ակնկալվում է՝

-շտապ օգնության կանչերի իրականացման տևողության հնարավորինը կրճատում, որի արդյունքում ժամանակին ցուցաբերվող անհետաձգելի բուժօգնության կազմակերպման ապահովում,

-շտապբուժօգնության որակյալ շտապօգնության ծառայությունների մատուցում:

Մոր և մանկան առողջության պահպանում

Մոր և մանկան առողջության պահպանումը առողջապահության ոլորտի կարևոր առաջնահերթություններից է: 2015թ. կարևորվելու է կանանց և երեխաների բժշկական օգնության կազմակերպման անհրաժեշտ ծավալների և մատչելիության, ինչպես նաև հիվանդությունների կանխարգելման միջոցառումների ապահովումն՝ ուղղված երեխաների և մայրերի մահացության ու հիվանդացության ցուցանիշների նվազմանը:

Արդյունքում ակնկալվում է՝

Երեխաների առողջության պահպանման ոլորտում՝

-նվազեցնել մանկական (0-1 տարեկան) և մինչև 5 տարեկան երեխաների մահացության մակարդակը,

-կրճատել նորածնային հիվանդացությունը և մահացությունը՝ նախածննդյան խնամքի ծառայությունների մատչելիության և որակի բարելավման, նորածնային սկրինինգային համակարգի ընդլայնման, մանկական վերակենդանացման և ինտենսիվ թերապիայի ծառայությունների բարելավման միջոցով,

-բարելավել **վաղ տարիքի** (0-5**տ**. **երեխաների**) **սնուցման կարգավիճակը**, **այդ թվում կրճատել** նրանց շրջանում թերսնուցման/թերաճի և սակավարյունության տարածվածությունը՝ **հանրային իրազեկման ծրագրերի իրականացման միջոցով**,

-բարելավել դեռահասների առողջության ցուցանիշները, ներառյալ առողջության պահպանման և առողջ սնուցման վերաբերյալ տեղեկատվության տրամադրում:

Մայրերի առողջության պահպանման ոլորտում՝

-կրճատել մայրական մահացության ցուցանիշը (միջին եռամյա կտրվածքով)

-բարելավել վերարտադրողական առողջության ծառայությունների մատչելիությունը և այդ ոլորտի ցուցանշները՝

հիվանդությունների կանխարգելման և վաղ հայտնաբերման սկրինինգային ծրագրերի (նախածննդյան ախտաբանություններ, նախաքաղցկեղային հիվանդություններ, անպտղություն և այլն) իրականացման, ինչպես նաև **անցանկալի հղիությունների կանխարգելման նպատակով հակաբեղմնավորիչ ժամանակակից միջոցների մատչելիության ապահովման և** ա**ղքատության նպաստների համակարգում ընդգրկված անպտուղ զույգերին վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության և սպասարկման առանձին տեսակների տրամադրման** միջոցով:

<u>Բնակչության սոցիալապես անապահով և առանձին /հատուկ/ խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնության տրամադրում</u>

Որպես առաջնահերթություն 2015 թվականին շարունակվելու է բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնության և սպասարկման առավելագույնս ապահովումը առողջապահական համակարգի բոլոր օղակներում:

Հիվանդանոցային բուժօգնության գծով՝ բժշկական օգնության ապահովումը հիվանդանոցային պայմաններում՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության համակարգի բժշկական համալիրներում, հիվանդանոցային բուժկազմակերպություններում, նեղ մասնագիտացված դիսպանսերների հիվանդանոցային բաժիններում՝ անկախ ախտորոշումից և տարիքից:

Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված անձանց հիվանդանոցային բուժման մեջ նորագույն, բարդ և թանկարժեք միջամտություններ, միջոցներ և ինպլանտներ պահանջող բուժման կիրառում .

Հատուկ և դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների գծով՝ ամբուլատոր-պոլիկլինիկական և/կամ հիվանդանոցային պայմաններում բուժվող հիվանդների համար հատուկ և դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների իրականացման ապահովումը՝ բժշկական հիմնավորված ցուցումների առկայության դեպքում:

<u>Սոցիալական, հատուկ նշանակություն ունեցող և առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելումն վաղ հայտնաբերում ու բուժօգնության կազմակերպում</u>

2015 թվականին շարունակվելու է սոցիալական կախվածություն և հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների վաղ հայտնաբերումը, հիվանդների բուժօգնության կազմակերպումը և շարունակական հսկողությունը, բնակչության շրջանում առողջ ապրելակերպի և հիգիենայի վերաբերյալ գիտելիքների քարոզչությունը:

Նեղ մասնագետների կողմից բնակչության շրջանում առողջ ապրելակերպի քարոզչության իրականացումը՝ ուղղված սոցիալական կախվածություն և հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների, վնասվածքների, թունավորումների և անհետաձգելի վիճակների կանխարգելմանը:

Ինֆեկցիոն հիվանդների հայտնաբերման, բժշկական օգնության ու շարունակական հսկողության, հիվանդանոցների հետ կապի պահպանման ապահովումը, անհրաժեշտության դեպքում, հիվանդների հոսպիտալացման հետ կապված խնդիրների լուծումը՝ ամբողջ բնակչության համար:

Սրտանոթային համակարգի հիվանդությունների դեմ պայքարի ուղղությամբ՝ սրտաբանական մասնագիտացված կաբինետների միջոցով սիրտանոթային համակարգի հիվանդություններով տառապող հիվանդների հայտնաբերման, բժշկական օգնության ու

շարունակական հսկողության ապահովումը:

Չարորակ նորագոյացությունների դեմ պայքարի ուղղությամբ՝ ուռուցքաբանական դիսպանսերներում և նեղ մասնագիտական կաբինետներում չարորակ նորագոյացություններով տառապող անձանց հայտնաբերման, հաշվառման, բժշկական օգնության ու շարունակական հսկողության ապահովումը:

Դիաբետով հիվանդների բժշկական օգնության ապահովման ուղղությամբ՝ էնդոկրինոլոգիական դիսպանսերների և մասնագիտացված կաբինետների միջոցով դիաբետով հիվանդների վաղ հայտնաբերման, բժշկական օգնության ու շարունակական հսկողության, հիվանդանոցների հետ կապի պահպանման ապահովումը:

<u>Դեղագործական գործունեության կազմակերպում, դեղերով և տեխնոլոգիաներով ապահովում՝</u>

Բնակչությանը պատշաճ որակի բժշկական օգնության և սպասարկման ծառայություն մատուցելու գործում կարևոր նշանակություն ունի ՀՀ-ում անվտանգ, արդյունավետ և որակյալ դեղերի առկայությունը և դրանց մատչելիությունը՝ համապատասխան տեսականիով (ՀՀ հիմնական դեղերի ցանկ): 2015թ. կարևորվելու է ՀՀ հիմնական դեղերի ցանկում առկա, բայց ՀՀ-ում չգրանցված և ցածր պահանջարկ ունեցող, սակայն կենսականորեն անհրաժեշտ դեղերի ՀՀ-ում առկայության ապահովման նպատակով դրանց պետական գրանցումը:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված է, որ որոշ հիվանդությունների և սոցիալական խմբերի դեպքում բնակիչներին իրավունք է տրվում դեղեր ձեռքբերել անվճար կամ արտոնյալ պայմաններով: Դեղապահովման աղբյուրներ են հանդիսանում՝ ՀՀ առողջապահության նախարարության կողմից կենտրոնացված կարգով դեղեր ձեռքբերելու համար պետական բյուջեի միջոցները, պետական բյուջեի «Առողջապահություն» բաժնի «Արտահիվանդանոցային ծառայություններ» խմբով նախատեսված միջոցները, ինչպես նաև մարդասիրական օգնության ճանապարհով ստացված դեղերը: 2015թ. կարևորվելու է կենտրոնացված կարգով ձեռքբերվող դեղերի անվանացանկի համալրումը նորագույն բուժման սխեմաների համար անհրաժեշտ դեղերով, պարբերաբար իրականացնվելու են դեղագորածական շուկայում դեղերի գների ուսումնասիրություններ, որը հնարավորություն կտա բժշկական հաստատությունների կողմից բնակչությանը անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղերով ապահովելիս վերահսկել դրանց գները:

3. **ՀՀ առողջապահության նախարարության կողմից մատուցվելիք ծառայություններում կատարվող խոշոր փոփոխությունները**, **ներառյալ այն ծառայությունները**, **որոնք աջակցում են հիմնական գերակա վերջնական արդյունքների նվաճմանը**

<u>Բնակչության հիգիենիկ և համաճարակային անվտանգության ապահովման ոլորտում նախատեսվում է՝</u>

1. Պետական հիգիենիկ և հակահամաճարակային հսկողության ուղղությամբ՝

-իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից սանիտարական կանոնների և նորմերի, հիգիենիկ նորմատիվների պահանջների կատարման ու հակահամաճարակային միջոցառումների իրականացման նկատմամբ տեսչական հսկողության իրականացումը՝ լաբորատոր հետազոտության համապատասխան մեթոդների ու տեխնիկական միջոցների կիրառմամբ ստուգումների, ուսումնասիրությունների կատարման միջոցով,

-բնակչության հիգիենիկ և համաճարակային անվտանգության ապահովման բնագավառում ոլորտի կառավարելիության, մատուցվող

ծառայությունների որակի և արդյունավետությանն ուղղված միջոցառումներ,
-իրավական դաշտի հետագա մշակում, զարգացում և արդիականացում,
- ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգի ներդրում,
-լաբորատոր բազայի արդիականացում, որակի հսկողության համակարգի ստեղծում,
-համընդհանուր լաբորատոր ցանցի գործունեության համակարգում՝ Միջազգային առողջապահական կանոնների պահանջներին համապատասխան, ռեֆերենս լաբորատոիայի գործառույթների իրականացում,
- հանրային առողջապահության ոլորտում կենսաապահովության և կենսաանվտանգության ապահովմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների իրականացում,
-վարակիչ և զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների, թունավորումների կանխարգելման նպատակով սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումների անցկացում, դրանց տարածվածության, համաճարակաբանության և ռիսկի գործոնների դիտարկումների, վերլուծությունների, ուսումնասիրությունների իրականացում, ռիսկի խմբերի բացահայտում, վարակիչ հիվանդությունների առաջացման ու դրանց տարածման պատճառների և պայմանների բացահայտման և հետազոտության ուղղությամբ իրականացվող աշխատանքների ծավալների ավելացում և արդյունավետության բարձրացում,
- բնակչության զանգվածային անընկալության ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացում,
-ներհիվանդանոցային ինֆեկցիաների հայտնաբերման և կանխարգելմանն ուղղված ծրագրերի իրականացում,
-համաճարակների, բռնկումների, թունավորումների և հանրային առողջության անվտանգությանը սպառնացող այլ իրավիճակներին պատրաստվածության և արաձագանքման ապահովում,
-բնակչության առողջության վրա շրջակա միջավայրի գործոնների ազդեցության սոցիալ-հիգիենիկ զննումների (մոնիտորինգի) իրականացում, արդյունքների վերլուծություն ու գնահատում,
-մարդու օրգանիզմի վրա ակուստիկ գործոնների ազդեցության նվազեցմանը նպաստող միջոցառումների կազմակերպում և իրականացում,
-բժշկական ու հիգիենիկ և հակահամաճարակային անվտանգության ոլորտի գիտելիքների և առողջ ապրելակերպի մասին քարոզչության ու բնակչության առանձին խմբերի կրթմանն ուղղված ծրագրերի իրականացում,
-տեղեկատվական /հաշվառման և հաշվետվության/ համակարգերի արդիականացում և բարեփոխում,
-ոլորտի բժիշկների, միջին բուժ.անձնակազմի և լաբորատոր համակարգի աշխատակիցների վերապատրաստման իրականացում:

<u>Բնակչության առողջության առաջնային պահպանում</u>

2015 թվականին պետք է շարունակվի և ընդլայնվի ընտանեկան բժշկության համակարգի ներդրումն ու զարգացումը հանրապետության ամբողջ տարածքում, հատուկ ուշադրություն դարձնելով քաղաքային պոլիկլինիկաների՝ այդ գործընթացում ներգրավվածությանը և խրախուսելով ընտանեկան բժշկության «թիմային (խմբային) պրակտիկաների» և «անկախ պրակտիկաների» ստեղծումը:

Շարունակվելու է բնակչի կողմից առողջության առաջնային պահպանման գործառույթ իրականացնող բժշկի ազատ ընտրության

գործընթացը, ռեսուրսների անկախ տնօրինման և բուժօգնության կազմակերպման գործում ինքնուրույն որոշումներ ընդունելու սկզբունքների ներդրման գործընթացը:

Ամփոփվելու են 2014 թվականին ԱԱՊ ծառայություններ մատուցողների կատարողականների վրա հիմնված ֆինանսավորման նպատակով հաստատված ցուցանիշները և իրականացվելու է ըստ կատարողականի խրախուսական փոխհատուցում: Առողջության առաջնային պահպանման բնագավառում ներդրվելու է առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և բուժմանն ուղղված՝ ապացուցողական բժշկության վրա հիմնված կլինիկական ուղեցույցներ և չափորոշիչներ, իրականացվելու են այդ հիվանդությունների վաղ հայտնաբերման սկրինինգային ծրագրեր:

<u>Շտապ բուժօգնություն</u>

2015 թվականի ռազմավարությամբ նախատեսվում է.

1) շտապօգնության մեքենաների պարկի նորացման և անհրաժեշտ սարքերով ու դեղերով հագեցման գործընթացի շարունակականության ապահովում,

2) շտապօգնության կանչերի գրանցման համակարգի արդիական մոտեցումների կիրառում,

3) շտապօգնության բժիշկների, բուժքույրերի և վարորդների վերապատրաստման մասնագիտացման և վերապատրաստման ծրագրերի իրագործում,

4) մատուցվող ծառայությունների որակի վերահսկման նպատակով ապացուցողական բժշկության մոտեցումների վրա հիմնված առկա կլինիկական ուղեցույցերի և վարման ընթացակարգերի կիրառման վերահսկում, ինչպես նաև նորերի մշակում և համակարգում ներդրում:

<u>Մոր և մանկան առողջության պահպանման ոլորտում նախատեսվում է՝</u>

-հղիների նախածննդյան հսկողության ծառայությունների ուժեղացում,

-«Ծննդօգնության պետական հավաստագրի» և «Երեխայի առողջության պետական հավաստագրի» համակարգերի շարունակական զարգացում,

-բարձր ռիսկի հղիների հսկողություն և հիվանդանոցային ծառայությունների ուժեղացում, ուղեգրման համակարգի բարելավում,

-երեխաների առողջության առաջնային պահպանման համակարգի շարունակական բարելավմանը զուգահեռ, երեխաների վերակենդանացման և ինտենսիվ թերապիայի ծառայությունների ուժեղացում հիվանդանոցային բուժօգնության ոլորտում, մարզային առողջապահական կառույցների շեշտադրմամբ,

-երեխաների հիվանդանոցային բուժօգնության բնագավառում բյուջետային միջոցների շարունակական ավելացում, մատուցվող բժշկական ծառայությունների որակի բարձրացում,

-երեխաների գնահատման և վերականգնողական բուժօգնության և ծառայությունների ցանցի ընդլայնում մարզային մակարդակում,

-«Դեռահասներին/երիտասարդներին բարյացակամ առողջապահական ծառայության» ցանցի հետագա զարգացում:

<u>Դեղագործական գործունեության կազմակերպում, դեղերով և տեխնոլոգիաներով ապահովման ոլորտում նախատեսվում է</u>

-իրավական դաշտի հետագա կատարելագործում բնակչությանը անվտանգ, արդյունավետ և որակյալ դեղերով ապահովմանը («Դեղերի մասին» ՀՀ օրենքից բխող ենթաօրենսդրական փաստաթղթերի մշակում և հաստատում):

-Անվճար և արտոնյալ պայմաններով հատկացվող դեղերի անվանական և քանակական լիարժեք ապահովում:

-ՀՀ հիմնական դեղերի ցանկում առկա, բայց ՀՀ-ում չգրանցված և ցածր պահանջարկ ունեցող, սակայն կենսականորեն անհրաժեշտ դեղերի ՀՀ-ում առկայության ապահովման նպատակով դրանց գրանցումը:

-Բնակչությանը որակյալ դեղերով ապահովման նպատակով՝ դեղերի որակի պետական վերահսկողության իրականացում:

4. **Խոշոր փոփոխություններ ՀՀ առողջապահության նախարարության ծառայությունների մատուցման ձևում՝**

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քաղաքականությունն ուղղված է լինելու համակարգի զարգացմանը և վերակազմավորմանը՝ ձգտելով մի այնպիսի համակարգի, որի կենտրոնում գտնվում է քաղաքացին, որպես առողջապահական ծառայությունների պոտենցիալ սպառող:

Աղքատության հաղթահարման և անհավասարության մեղմացման և սոցիալական արդարության տեսանկյունից կարևորվում է ոչ միայն մատչելիության ապահովումը, այլև իրականացվող բուժօգնության որակի բարելավումը՝ հատկապես հանրապետության գյուղական վայրերի բնակչության համար, որի նպատակով կիրառվելու է որակի վերահսկման ներքին (բուժհաստատության ներսում) և արտաքին (ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ մարզպետարաններ, Երևանի քաղաքապետարան) մեխանիզմների ներդրումը:

Մարզերի համաչափ զարգացման և հեռավոր և սահմանամերձ շրջաններում բժշկական կադրերի մեծ պահանջարկը համալրելու նպատակով հեռավոր և սահմանամերձ շրջաններում աշխատող բժշկական կադրերին սոցիալական աջակցության և արտոնությունների տրամադրման մասին իրավական ակտերի մշակում և ներկայացում ՀՀ կառավարությանը:

Կադրերի շարունակական մասնագիտական կրթության և վերապատրաստման համակարգի բարելավում:

Բնակչության հիգիենիկ և համաճարակային անվտանգության ապահովման բնագավառում՝

-Լաբորատոր գործունեության զարգացում, լաբորատոր ցանցի համակարգում, դրանցում որակի կառավարման և կենսաանվտանգության, կենսաապահովության համակարգերի ներդրում, ռեֆերենս լաբորատորիայի գործառույթների իրականացում,

-էլեկտրոնային ինտեգրացված համաճարակաբանական հսկողության համակարգի ներդրում,

-առկա լաբորատոր նյութատեխնիկական բազայի հզորացում և արդիականացում:

Բնակչության առողջության առաջնային պահպանման օղակում նման վերափոխումներն են՝

-բժշկի ազատ ընտրությունը,

-ընտանեկան բժշկի անկախ խմբային և անհատական պրակտիկաների ներդրումը,

-իրականացվող բուժօգնության և մատուցվող ծառայությունների որակի վերահսկման ու բարելավման նպատակով ներդրված չափորոշիչների կիրառման վերահսկումը և ըստ դրանց կատարողականի խրախուսող վարձատրության սկզբունքների կատարելագործումը:

Մոր և մանկան առողջության պահպանման ուղղությամբ

Կարևորվում է բուժօգնության որակի և մատչելիության, ինչպես նաև բուժաշխատողների մասնագիտական հմտությունների բարելավումը և այդ նպատակով նախատեսվում է միջազգային նորմերին համապատասխան՝ կանոնակարգող չափորոշիչների և ուղեցույցների մշակում և ներդրում: Նախատեսվում է նաև ապացուցողական բժշկության հիմքերի վրա կառուցված բուժօգնության կազմակերպման /կառավարման և բժշկական գործելակերպի զարգացում, ինչպես նաև երեխաների և կանանց առողջության և առողջապահական ցուցանիշների նկատմամբ շարունակական հսկողության/մոնիտորինգի համակարգի մշակում և ներդրում: Կարևորվում է նաև մանկական նեղ մասնագիտությունների գծով կադրերի վերապատրաստման համակարգի բարելավում, մարզային կառույցներում մանկական նեղ մասնագետների (մանկաբույժ, մանկական ռեանիմատոլոգ, նեոնատոլոգ) պատրաստումը:

Երեխաների հիվանդանոցային բուժօգնության բնագավառում կիրառվող բուժօգնության կազմակերպման հավաստագրային համակարգի շարունակական իրականացում և դրա արդյունքների գնահատում:

Դեղագործական գործունեության կազմակերպում, **դեղերով և տեխնոլոգիաներով ապահովման ոլորտում կարևորվում է**

Շաքարային և ոչ շաքարային դիաբետով, հոգեկան հիվանդություններով, չարորակ նորագոյացություններով տառապող հիվանդների բուժման համար նորագույն սխեմաների ներդրում և համապատասխան դեղերով լիարժեք ապահովում:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում 2015 թվականի նախատեսվում է ՀՀ Սյունիքի մարզի Մեղրու տարածաշրջանում նոր շենքի կառուցման և Կապանի բժշկական կենտրոնի վերանորոգման շինարարական աշխատանքների իրականացում, բժշկական սարքավորումների, կահույքի և պարագաների ձեռքբերում:

2015թ. «Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» վարկային ծրագրի շրջանակներում, նախատեսվում է ՀՀ ԱՆ Ռ.Հ.Յոլյանի անվան Արյունաբանական կենտրոնի վերանորոգման և ֆունկցիոնալ ախտորոշման մասնաշենքի կառուցման շինարարական աշխատանքների իրականացում:

2015թ. նախատեսվում է Հայաստանի ողջ տարածքում մշակել և ստեղծել գրիպի համաճարակաբանական հսկողության կայուն համակարգ՝ համապատասխան լաբորատոր և ախտորոշիչ հզորություններով, որոնք հնարավորություն կընձեռեն արագ ախտորոշել կասկածելի դեպքերը և իրականացնել սեզոնային և պանդեմիկ գրիպի դետքային վերահսկողություն, համապատասխան վարակաբանական հսկողություն և մարդկային ռեսուրսների հզորությունների հսկողություն, որը հնարավորություն կտա արդյունավետ արձագանքել պանդեմիկ և նովել գրիպի վտանգներին, սահմանել և վերահսկել սեզոնային գրիպի և շնչառական հիվանդությունների ազդեցությունը հանրային առողջության վրա և ամբողջովին մասնակցել ԱՀԿ GISN՝ ԱՀԿ համագործակցության կենտրոններին ժամանակին և որակյալ նմուշներ տրամադրելով:

2015թ. նախատեսվում է ոչ վարակիչ հիվադությունների և մոր ու մանկան առողջության ծառայությունների բարելավում՝ ԱԱՊ հաստատություններում: Այդ ուղղությամբ նախատեսվում է իրականացնել առողջ ապրելակերպի խթանմանն և ոչ վարակիչ հիվանդությունների հիմնական ռիսկային գործոնների կանխարգելմանը ուղղված հանրային իրազեկման քարոզարշավ:

Չափորոշիչներ		Ոչ ֆինանսական ցուցանիշներ				Ֆինանսական ցուցանիշներ			
		Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի	Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի

ՄԱՍ Բ: Կառավարչական հիմնարկի անմիջական գործունեության արդյունքները

1. Անմիջականորեն մատուցվող ծառայությունների արդյունքային ցուցանիշները

Ծրագրային դասիչը 1001 ԱԾ16	*Անվանումը՝* Առողջապահության ոլորտի պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիտորինգի ծառայություններ *Նկարագրություն* Քաղաքականության մշակման և իրականացման, իրավական ակտերի նախագծերի մշակման, խորհրդատվության, ծրագրերի համակարգման, կանոնակարգման, առողջապահական, փորձագիտական, կազմակերպա մեթոդական, գնման, մոնիտորինգի ծառայություններ								
Քանակական	Մշակված իրավական ակտերի նախագծերի (փաստաթղթեր և/կամ ստանդարտներ) պատրաստված քաղաքականության փաստաթղթերի, ծրագրերի, հաշվետվությունների և վերլուծությունների ընդհանուր թիվը				120	0.0	0.0	0.0	0.0
	Հանրային իրազեկումների թիվը, ուղղակի ծառայություններ հանրությանը, կազմակերպությունների թիվը, որոնց տրամադրվել է խորհրդատվություն				150	0.0	0.0	0.0	0.0
	Քաղաքացիների ընդունելություն (մարդ)				220	0.0	0.0	0.0	0.0
	Դիմումների և բողոքների ուսումնասիրում (թիվը)				10000	0.0	0.0	0.0	0.0
	Միջազգային համագործակցություն. Մշակված համաձայնագրերի, հուշագրերի, արձանագրությունների, ծրագրերի և այլ փաստաթղթերի թիվը, հանդիպումների, քննարկումների և համագործակցության այլ միջոցառումների թիվը				65	0.0	0.0	0.0	0.0
	Միջգերատեսչական խորհրդատվություն և համագործակցություն. Մշակված համաձայնագրերի, հուշագրերի, արձանագրությունների, ծրագրերի և այլ փաստաթղթերի, հանդիպումների, քննարկումների և համագործակցության այլ միջոցառումների թիվը				41	0.0	0.0	0.0	0.0
	Կառավարվող, մոնիտորինգի ենթարկվող համակարգվող ծրագրերի թիվը				25	0.0	0.0	0.0	0.0

Չափորոշիչներ		Ոչ ֆինանսական ցուցանիշներ				Ֆինանսական ցուցանիշներ			
		Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի	Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
Որակական	Մշակված չէ					0.0	0.0	0.0	0.0
Ժամկետայնության	Նախարարություն մուտքագրված գրություններին պատասխանելու միջին ժամկետը (օր)				5	0.0	0.0	0.0	0.0
Մատուցվող ծառայության վրա կատարվող ծախսը (հազար դրամ)		X	X	X	X	0.0	0.0	0.0	2,042,662.8

Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը

1001 Պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիտորինգի ծրագիր

Վերջնական արդյունքի նկարագրությունը

Առողջապահական ծառայությունների որակի և մատչելիության բարձրացում, առողջապահական համակարգի գործունեության արդյունավետության բարձրացում

Ծառայություն մատուցողի (մատուցողների) անվանումը

ՀՀ առողջապահության նախարարություն

Չափորոշիչներ		Ոչ ֆինանսական ցուցանիշներ				Ֆինանսական ցուցանիշներ			
		Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի	Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի

ՄԱՍ Գ: Նախարարի պատասխանատվության ներքո իրականացվող քաղաքականության միջոցառումների և ֆինանսական կառավարման արդյունքների ցուցանիշները

1.Քաղաքականության միջոցառումներ

1.1 Ծառայություններ

Ծրագրային դասիչը 1001 ԱԾ17	*Անվանումը՝* Առողջ ապրելակերպի խթանման և հանրային իրազեկման ծառայություններ *Նկարագրություն* Ամենամյա պետական նպատակային ծրագրերի շրջանակներում «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ կառավարության որոշման ու դրանից բխող՝ ՀՀ առողջապահության նախարարության կողմից մշակված և ընդունված նորմատիվային ակտերի լուսաբանման աշխատանքներ								
Քանակական	Պատրաստվող և մետրային հեռուստատեսությամբ՝ ուղիղ եթերի և ինտերակտիվ կապի միջոցներով հեռարձակվող առողջապահական հեռուստահաղորդումների (մեկ հաղորդումը միջինը 35 րոպեի հաշվարկով) թիվը				54	0.0	0.0	0.0	0.0
	Բնակչության առողջության պահպանման, բուժկանխարգելման, առողջապահության ոլորտի կառավարման հարցերի վերաբերյալ մշակված և մամուլում հրապարակված մեթոդական ձեռնարկների (16 էջի հաշվարկով) թիվը				296	0.0	0.0	0.0	0.0
Որակական	Մշակված չէ					0.0	0.0	0.0	0.0
Ժամկետայնության	Մշակված չէ					0.0	0.0	0.0	0.0
Մատուցվող ծառայության վրա կատարվող ծախսը (հազար դրամ)		X	X	X	X	0.0	0.0	0.0	90,000.0

Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը

1001 Պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիտորինգի ծրագիր

Չափորոշիչներ		Ոչ ֆինանսական ցուցանիշներ				Ֆինանսական ցուցանիշներ			
		Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի	Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
Վերջնական արդյունքի նկարագրությունը Ծրագիրը նպաստում է ՀՀ նախարարության կողմից իրականացվող ծրագրերի գծով նախատեսված արդյունքների ապահովմանը									
Ծառայություն մատուցողի (մատուցողների) անվանումը Առողջապահական կազմակերպություններ, ՀԼՄ-ներ									
Ծրագրային դասիչը 1001 ԱԾ24	*Անվանումը՝* «Երեխաների առողջ սնուցում» հանրային իրազեկման ծառայություններ *Նկարագրություն* Երեխաների առողջ սնուցմանը խթանող հանրային իրազեկման ծառայությունների մատուցում								
Քանակական	Տպագրվող գրքույքների, բուկլետների և պաստառների թիվը				101000	0.0	0.0	0.0	0.0
	Պատրաստվող և հեռարձակվող հեռուստատեսային հաղորդումների թիվը				12	0.0	0.0	0.0	0.0
Որակական	Մշակված չէ					0.0	0.0	0.0	0.0
Ժամկետայնության	Մշակված չէ					0.0	0.0	0.0	0.0
Մատուցվող ծառայության վրա կատարվող ծախսը (հազար դրամ)		X	X	X	X	0.0	0.0	0.0	10,150.0
Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը 1001 Պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիտորինգի ծրագիր									
Վերջնական արդյունքի նկարագրությունը Ծրագիրը նպաստում է ՀՀ նախարարության կողմից իրականացվող ծրագրերի գծով նախատեսված արդյունքների ապահովմանը									
Ծառայություն մատուցողի (մատուցողների) անվանումը Առողջապահական կազմակերպություններ, ՀԼՄ-ներ									
Ծրագրային դասիչը 1003 ԱԾ01	*Անվանումը՝* Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման և հանրային առողջապահության ծառայություններ								

Չափորոշիչներ		Ոչ ֆինանսական ցուցանիշներ				Ֆինանսական ցուցանիշներ			
		Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի	Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
	Նկարագրություն Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման (մասնագիտացված լաբորատորային հետազոտություններ), ընթացիկ հակահամաճարակային և սանիտարահիգիենիկ նշանակության հետազոտություններ, հատուկ վտանգավոր վարակների օջախների համաճարակաբանական հետազոտություններ, իմունոկանխարգելման հիգիենիկ ուսուցման և քարոզչության ծառայություններ								
Քանակական	1) Բնակչության թվից կախված հետազոտությունների թիվը				3200000	0.0	0.0	0.0	0.0
	2) Մանրէաբանական հետազոտությունների թիվը				705800	0.0	0.0	0.0	0.0
	3) Հատուկ վտանգավոր վարակների նկատմամբ հետազոտությունների թիվը				94280	0.0	0.0	0.0	0.0
	4) Մակաբուծաբանական հետազոտությունների թիվը				407400	0.0	0.0	0.0	0.0
	5) Վիրուսաբանական հետազոտությունների թիվը				8400	0.0	0.0	0.0	0.0
	6) Քիմիական հետազոտությունների թիվը				302370	0.0	0.0	0.0	0.0
	7) Ճառագայթաբանական հետազոտությունների թիվը				80	0.0	0.0	0.0	0.0
	8) Բաշխված իմունոպատրաստուկների դոզաների քանակը				312499	0.0	0.0	0.0	0.0
	9) Ձեռք բերված այլ իմունոպատրաստուկների դոզաների քանակը				7000	0.0	0.0	0.0	0.0
	10) Վարակիչ օջախների ախտահանման ծառայություններ /քանակը/				5500	0.0	0.0	0.0	0.0
Որակական	Մշակված չէ					0.0	0.0	0.0	0.0
Ժամկետայնության	Մշակված չէ					0.0	0.0	0.0	0.0
Մատուցվող ծառայության վրա կատարվող ծախսը (հազար դրամ)		X	X	X	X	0.0	0.0	0.0	3,220,854.6

Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը

1003 Հանրային առողջության պահպանման ծրագիր

Վերջնական արդյունքի նկարագրությունը

Մարդու օրգանիզմի վրա շրջակա միջավայրի վնասակար և վտանգավոր գործոնների ազդեցության բացառում և նվազեցում, մարդու և նրա ապագա սերունդների կենսունակության համար բարենպաստ պայմանների ապահովում (արգելակել և հակադարձել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, մալարիայի և այլ հիվանդությունների տարածման ընթացքը)

Չափորոշիչներ		Ոչ ֆինանսական ցուցանիշներ				Ֆինանսական ցուցանիշներ			
		Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի	Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
Ծառայություն մատուցողի (մատուցողների) անվանումը «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ									
Ծրագրային դասիչը 1003 ԱԾ05	*Անվանումը՝* Վարակիչ հիվանդությունների օջախների ախտահանման ծառայություններ *Նկարագրություն* Ախտահանում և դրան առնչվող ծառայություններ								
Քանակական	Ախտահանված օջախների թիվը				4158	0.0	0.0	0.0	0.0
Որակական	Մշակված չէ					0.0	0.0	0.0	0.0
Ժամկետայնության	Մշակված չէ					0.0	0.0	0.0	0.0
Մատուցվող ծառայության վրա կատարվող ծախսը (հազար դրամ)		X	X	X	X	0.0	0.0	0.0	74,843.1
Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը 1003 Հանրային առողջության պահպանման ծրագիր									
Վերջնական արդյունքի նկարագրությունը Մարդու օրգանիզմի վրա շրջակա միջավայրի վնասակար և վտանգավոր գործոնների ազդեցության բացառում և նվազեցում, մարդու և նրա ապագա սերունդների կենսունակության համար բարենպաստ պայմանների ապահովում (արգելակել և հակադարձել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, մալարիայի և այլ հիվանդությունների տարածման ընթացքը)									
Ծառայություն մատուցողի (մատուցողների) անվանումը «Ախտահանման կենտրոն» ՓԲԸ									
Ծրագրային դասիչը 1003 ԱԾ06	*Անվանումը՝* Արյան հավաքագրման ծառայություններ *Նկարագրություն* Արյան պահուստի որակի վերահսկում, զննում, հավաքած նմուշների փորձաքննություն և արյան հավաքագրմանն առնչվող այլ ծառայությունների իրականացում								
Քանակական	ՀՀ-ում ծննդօգնության շրջանակում հակառեզուս Rh(D) իմունոգլոբուլինի ապահովման դեպքերի թիվը				3750	0.0	0.0	0.0	0.0
	Դոնորական արյան վարակային անվտանգության ապահովման դեպքերի թիվը				9440	0.0	0.0	0.0	0.0

Չափորոշիչներ		Ոչ ֆինանսական ցուցանիշներ				Ֆինանսական ցուցանիշներ			
		Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի	Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
	Դոնորական արյան և դրա բաղադրամասերի հազվագյուտ արյան խմբերի անձեռնմխելի պաշարների հավաքագրման, պահպանման, երկարատև սառեցման, կադրային դոնորի փոխհատուցման դեպքերի թիվը				1300	0.0	0.0	0.0	0.0
	Հանրապետական արյան կայանների թիվը				6	0.0	0.0	0.0	0.0
	Մեկ ամսվա ընթացքում սեմինարների թիվը (կազմակերպչամեթոդական օգնության ցուցաբերում)				12	0.0	0.0	0.0	0.0
Որակական	Մշակված չէ					0.0	0.0	0.0	0.0
Ժամկետայնության	Մշակված չէ					0.0	0.0	0.0	0.0
Մատուցվող ծառայության վրա կատարվող ծախսը (հազար դրամ)		X	X	X	X	0.0	0.0	0.0	250,958.4

Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը

1003 Հանրային առողջության պահպանման ծրագիր

Վերջնական արդյունքի նկարագրությունը

Մարդու օրգանիզմի վրա շրջակա միջավայրի վնասակար և վտանգավոր գործոնների ազդեցության բացառում և նվազեցում, մարդու և նրա ապագա սերունդների կենսունակության համար բարենպաստ պայմանների ապահովում (արգելակել և հակադարձել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, մալարիայի և այլ հիվանդությունների տարածման ընթացքը)

Ծառայություն մատուցողի (մատուցողների) անվանումը

«Պրոֆեսոր Յոլյանի անվ. արյունաբանական կենտրոն» ՓԲԸ, արյան հավաքագրման կենտրոններ

Ծրագրային դասիչը 1003 ԱԾ07	*Անվանումը՝* Իմունականխարգելման ազգային ծրագիր *Նկարագրություն* Իմունականխարգելման ազգային ծրագրի իրականացման ծառայություններ								
Քանակական	1) Իմունականխարգելման աշխատանքների իրականացման համար ձեռք բերված պատվաստանյութերի դոզաների քանակը (պատվաստանյութերի գնում, ստացում, մաքսազերծում, տեղափոխում, քանակակազմի ճշտում, բաշխում)				292950	0.0	0.0	0.0	0.0
	2) Իմունականխարգելման աշխատանքների իրականացման համար UNISEF-ի միջոցով ձեռք բերված պատվաստանյութերի դոզաների քանակը				1158985	0.0	0.0	0.0	0.0
Որակական	Մշակված չէ					0.0	0.0	0.0	0.0

Չափորոշիչներ		Ոչ ֆինանսական ցուցանիշներ				Ֆինանսական ցուցանիշներ			
		Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի	Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
Ժամկետայնության	Մշակված չէ					0.0	0.0	0.0	0.0
Մատուցվող ծառայության վրա կատարվող ծախսը (հազար դրամ)		X	X	X	X	0.0	0.0	0.0	1,890,364.5

Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը

1003 Հանրային առողջության պահպանման ծրագիր

Վերջնական արդյունքի նկարագրությունը

Մարդու օրգանիզմի վրա շրջակա միջավայրի վնասակար և վտանգավոր գործոնների ազդեցության բացառում և նվազեցում, մարդու և նրա ապագա սերունդների կենսունակության համար բարենպաստ պայմանների ապահովում (արգելակել և հակադարձել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, մալարիայի և այլ հիվանդությունների տարածման ընթացքը)

Ծառայություն մատուցողի (մատուցողների) անվանումը

«Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ

Ծրագրային դասիչը

1053 ԱԾ01

Անվանումը՝

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման ծրագիր

Նկարագրություն

Հեմատոլոգիական կենտրոնի կառուցում, ուռուցքաբանության նոր ռադիոճառագայթային կարողությունների զարգացում: Վանաձորի բժշկական կենտրոնի նոր շենքի կառուցում,ժամանակակից սարքավորումների ձեքռբերում

Քանակական	Համաձայն Համաշխարհային բանկի պահանջների					0.0	0.0	0.0	0.0
Որակական	Մշակված չէ					0.0	0.0	0.0	0.0
Ժամկետայնության	Մշակված չէ					0.0	0.0	0.0	0.0
Մատուցվող ծառայության վրա կատարվող ծախսը (հազար դրամ)		X	X	X	X	0.0	0.0	0.0	2,046,224.2

Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը

1053 Առողջապահության համակարգի արդիականացման և արդյունավետության բարձրացման ծառայություններ

Վերջնական արդյունքի նկարագրությունը

Բուժօգնության և ծառայությունների որակի ու մատչելիության բարձրացում

Ծառայություն մատուցողի (մատուցողների) անվանումը

Չափորոշիչներ		Ոչ ֆինանսական ցուցանիշներ				Ֆինանսական ցուցանիշներ			
		Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի	Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
ՀՀ առողջապահության նախարարության «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ									
Ծրագրային դասիչը 1053 ԱԾ02	*Անվանումը՝* Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Առողջապահական համակարգի արդիականացման երկրորդ ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման ծրագիր *Նկարագրություն* Համաշխարհային բանկի աջակցությամբ ՀՀ Արմավիրի, Արարատի, Կոտայքի և Լոռու մարզերում 13 համայնքների նոր ամբուլատորիաների կառուցում, 7 բժշկական կենտրոնների վերակառուցում, ժամանակակից սարքավորումների ձեքռբերում								
Քանակական	Համաձայն Համաշխարհային բանկի պահանջների					0.0	0.0	0.0	0.0
Որակական	Մշակված չէ					0.0	0.0	0.0	0.0
Ժամկետայնության	Մշակված չէ					0.0	0.0	0.0	0.0
Մատուցվող ծառայության վրա կատարվող ծախսը (հազար դրամ)		X	X	X	X	0.0	0.0	0.0	1,438,176.2
Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը 1053 Առողջապահության համակարգի արդիականացման և արդյունավետության բարձրացման ծառայություններ									
Վերջնական արդյունքի նկարագրությունը Բուժօգնության և ծառայությունների որակի ու մատչելիության բարձրացում									
Ծառայություն մատուցողի (մատուցողների) անվանումը ՀՀ առողջապահության նախարարության «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ									
Ծրագրային դասիչը 1053 ԱԾ03	*Անվանումը՝* ԱՄՆ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման կենտրոնի կողմից իրականացվող Սոզոնային գրիպի համաճարակաբանական ցանցի հիմնման և արձագանքման դրամաշնորհային ծրագիր								

Չափորոշիչներ		Ոչ ֆինանսական ցուցանիշներ				Ֆինանսական ցուցանիշներ			
		Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի	Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
	Նկարագրություն Հայաստանում սեզոնային գրիպի համաճարակաբանական հսկողության ցանցի հիմնում, լոբորատոր ախտորոշման, դեպի արագ և ժամանակին հայտնաբերման և հսկողության կարողությունների հզորացում								
Քանակական	Համաձայն Համաշխարհային բանկի պահանջների					0.0	0.0	0.0	0.0
Որակական	Մշակված չէ					0.0	0.0	0.0	0.0
Ժամկետայնության	Մշակված չէ					0.0	0.0	0.0	0.0
Մատուցվող ծառայության վրա կատարվող ծախսը (հազար դրամ)		X	X	X	X	0.0	0.0	0.0	126,297.9

Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը

1053 Առողջապահության համակարգի արդիականացման և արդյունավետության բարձրացման ծառայություններ

Վերջնական արդյունքի նկարագրությունը

Բուժօգնության և ծառայությունների որակի ու մատչելիության բարձրացում

Ծառայություն մատուցողի (մատուցողների) անվանումը

«Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ

Ծրագրային դասիչը 1053 ԱԾ04	*Անվանումը՝* Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման դրամաշնորհային ծրագիր *Նկարագրություն* Ծրագրով նախատեսված դրամաշնորհն ուղղված է հիմնական վարկային ծրագրի աջակցմանը: ?ախատեսում է ոչ տարափոխիկ հիվանդությունների վրա հիմնված ծրագրի հզորությունների գնահատում և մշակում, արդյունքների վրա հիմնված ֆինանսավորման առկա սխեմայի վերանայում, աշխատաժողովների ուսումնական նյութերի մշակում/աշխատաժողովների իրականացում:								
Քանակական	Համաձայն Համաշխարհային բանկի պահանջների					0.0	0.0	0.0	0.0
Որակական	Մշակված չէ					0.0	0.0	0.0	0.0
Ժամկետայնության	Մշակված չէ					0.0	0.0	0.0	0.0

Չափորոշիչներ		Ոչ ֆինանսական ցուցանիշներ				Ֆինանսական ցուցանիշներ			
		Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի	Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
Մատուցվող ծառայության վրա կատարվող ծախսը (հազար դրամ)		X	X	X	X	0.0	0.0	0.0	240,628.2
Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը 1053 Առողջապահության համակարգի արդիականացման և արդյունավետության բարձրացման ծառայություններ									
Վերջնական արդյունքի նկարագրությունը Բուժօգնության և ծառայությունների որակի ու մատչելիության բարձրացում									
Ծառայություն մատուցողի (մատուցողների) անվանումը ՀՀ առողջապահության նախարարության «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ									
Ծրագրային դասիչը 1053 ԱԾ05	*Անվանումը՝* Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման ծրագրի շրջանակներում առողջապահության կատարողականի վրա հիմնված ֆինանսավորման ծրագրի նախապատրաստման համար» դրամաշնորհային ծրագիր *Նկարագրություն* Ոչ վարակիչ հիվանդությունների արդյունքների վրա հիմնված ծրագրի հզորությունների գնահատում և մշակում: Արդյունքների վրա հիմնված ֆինանսավորման առկա սխեմայի վերանայում (ներառյալ ՊԱԳ-ի հաշվետվական ձևերի, ֆինանսական և մշտադիտարկման կանոնակարգերի վերանայում): ?շխատաժողովների ուսումնական նյութերի մշակում (աշխատաժողովների իրականացում) ? սարքավորումների տրամադրում:								
Քանակական	Համաձայն ՎԶՄԲ-ի փոխատվությունների և ՄԶԸ-ի վարկերի և դրամաշնորհների շրջանակներում Համաշխարհային բանկի վարկառուների կողմից ապրանքների, աշխատանքների գնման և խորհրդատուների ընտրության ու աշխատանքի ընունման ուղեցույցների պահանջների					0.0	0.0	0.0	0.0
Որակական	Մշակված չէ					0.0	0.0	0.0	0.0
Ժամկետայնության	Մշակված չէ					0.0	0.0	0.0	0.0
Մատուցվող ծառայության վրա կատարվող ծախսը (հազար դրամ)		X	X	X	X	0.0	0.0	0.0	12,337.8

Չափորոշիչներ		Ոչ ֆինանսական ցուցանիշներ				Ֆինանսական ցուցանիշներ			
		Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի	Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը									
1053 Առողջապահության համակարգի արդիականացման և արդյունավետության բարձրացման ծառայություններ									
Վերջնական արդյունքի նկարագրությունը									
Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման ծրագրի շրջանակներում նախագծել և նախապատրաստել կատարողականի վրա հիմնված ֆինանսավորման ծրագիրը									
Ծառայություն մատուցողի (մատուցողների) անվանումը									
ՀՀ առողջապահության նախարարության «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ									
Ծրագրային դասիչը 1081 ԱԾ03	*Անվանումը՝* Գրադարանային ծառայություններ (առողջապահության ոլորտ) *Նկարագրություն* Գրադարանային հավաքածուների պահպանում և համալրում, ընթերցողների սպասարկում, գրադարանային միջոցառումների կազմակերպում								
Քանակական	Ընթերցողների թիվը				5710	0.0	0.0	0.0	0.0
	Գրականության համալրում				539391	0.0	0.0	0.0	0.0
	Գրքատածք				85650	0.0	0.0	0.0	0.0
Որակական	Մշակված չէ					0.0	0.0	0.0	0.0
Ժամկետայնության	Մշակված չէ					0.0	0.0	0.0	0.0
Մատուցվող ծառայության վրա կատարվող ծախսը (հազար դրամ)		X	X	X	X	0.0	0.0	0.0	62,835.7
Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը									
1081 Գրադարանային ծառայությունների ծրագիր									
Վերջնական արդյունքի նկարագրությունը									
Բնակչության կրթական մակարդակի և իրազեկվածության բարձրացում՝ նպաստելով ԿԶԾ կրթական նպատակների իրագործմանը, հանրապետության գիտական, տեխնիկական և մշակութային ներուժի զարգացմանը									
